ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Գիտահետազոտական գործունեություն

Համալսարանական գիտության և գիտահետազոտական գործունեության հետագա զարգացումը տնտեսության առաջընթացի և տնտեսական արդյունավետ քաղաքականության հիմնական երաշխիքն է: Հայաստանի Հանրապետության՝ գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը ամրագրում է 2011-2020 թվականներին գիտության ոլորտի հեռանկարային զարգացմանն ուղղված պետական քաղաքականությունը: Ռազմավարությունը Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի ներկա վիճակի, առկա հիմնախնդիրների, հեռանկարային զարգացման նպատակների և ուղղությունների վերաբերյալ դրույթների ամբողջություն է: Այդ ծրագրերն ապահովելու են Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի դինամիկ և նպատակաուղղված զարգացումը և իրականացվելու են կառավարության, մասնավոր բիզնեսի, քաղաքացիական հասարակության ինստիտուտների և սփյուռքի ջանքերի զուգակցմամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանական գիտահետազոտական գործունեությունը կազմակերպվել և իրականացվել է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2012-2017 թթ. գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության զարգացման հայեցակարգով» սահմանված խնդիրների ու նպատակների համաձայն:

2016 թվականին շարունակվել է գիտահետազոտական գործունեության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումը:

Համալսարանի գիտական խորհրդի՝ 2014 թվականի մարտի 26-ի նիստում հաստատվել և գործողության մեջ էր դրվել «Գիտաուսումնական խմբերի հետազոտական նախագծերի մրցույթի վերաբերյալ կանոնակարգը», իսկ 2015 թ. գիտական խորհրդի որոշմամբ լրացում կատարվեց «Գիտաուսումնական խմբերի հետազոտական նախագծերի վերաբերյալ կանոնակարգում», համաձայն որի՝ շարունակվել են ներհամալսարանական գիտաուսումնական խմբերի հետազոտական աշխատանքների կատարումը գիտական և ակադեմիական ուղղություններով: Միաժամանակ, շարունակվել են «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից իրականացվող հետազոտությունները:

Գիտաուսումնական խմբերի թեմաներին մասնակցել են 27 հետազոտողներ՝ դասախոսներ, ասպիրանտներ և մագիստրանտներ:

Ընդհանուր առմամբ՝ ներհամալսարանական գիտաուսումնական խմբերի թեմաների մեջ և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գիտահետազոտական ուղղությունների մեջ ներգրավված է բուհի պրոֆեսորադասախոսական կազմի շուրջ 18%-ը:

2. Գիտահետազոտական գործունեության 2016 թ. հիմնական ուղղությունները

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանում շարունակվել է ամբիոնային 88 թեմաներով գիտահետազոտական աշխատանքների, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի 3 դրամաշնորհային, ներհամալսարանական 4 գիտաուսումնական

խմբերի թեմաների և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի 5 գիտական ուղղություններով ծրագրերի իրականացումը:

Ամբիոնային հետազոտությունները կատարվել են տնտեսագիտության, բնական գիտությունների, պատմության, քաղաքագիտության, փիլիսոփայության, բանասիրության բնագավառներում:

Գիտաուսումնական խմբերն իրականացրել են հետևյալ հետազոտությունները.

1. «Սպառողների (ուսանողների) բավարարվածության հիմնախնդիրները ՀՀ բարձրագույն կրթական ծառայությունների շուկայում և ՀՊՏՀ ներքին կանոնակարգերի մշակում»:
2. «Գլոբալացումը և զարգացող երկրների մարտահրավերները»:
3. «Գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրության ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում»:
4. «Ուղեղային կենտրոններն արդի քաղաքական գործընթացներում»:

2016 թվականին համալսարանում կատարվել են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բյուջետային ֆինանսավորմամբ հետևյալ 3 թեմաները.

1. «ՀՀ տնտեսական ու սոցիալական զարգացման վրա գիտության և կրթության ազդեցության ինտենսիվացման գերակայությունները և կառուցակարգերը»:
2. «Ամբողջական պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերի վերլուծությունն ու կանխատեսումը ՀՀ-ում»:
3. «Մաքսային Միության ընդլայնումը որպես անդամ երկրների մրցունակության բարձրացման գործոն. Հայաստանի Հանրապետության և Բելառուսի օրինակով»:

Բացի վերոնշյալից, համալսարանի առանձին աշխատակիցներ ներգրավված են միջազգային մի շարք ծրագրերի մեջ:

«Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2016 թվականի գիտական ուսումնասիրությունների արդյունքները հրատարակվել են «Տնտեսագետ» հրատարակչությունում: «Ամբերդ» մատենաշարն ընդգրկում է 6 համախումբ մենագրություն:

2016 թվականին ավարտին են հասցվել 2015 թվականի հետազոտական թեմաների մրցույթի հիման վրա ձևավորված 5 հետազոտական թեմաները, որոնց արդյունքները գիտական խորհրդի երաշխավորությամբ հրատարակվել են իբրև գիտական հետազոտության հաշվետվություններ՝ ըստ «Ամբերդ» մատենաշարի հերթական համարների: «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հետ համատեղ իրականացվել է մեկ հետազոտական թեմա:

Որակի ապահովման գործընթացում համալսարանի տեղեկատվական կարիքների բավարարման, մասնագիտական կրթական ծրագրերի մշակման աշխատանքների գիտական աջակցության ապահովման, ինչպես նաև կրթական շուկայի ու աշխատաշուկայի մշտադիտարկումների նպատակով ձևավորվել է «Կրթական ծրագրերի ու տեխնոլոգիաների հետազոտություններ և մշակումներ» հետազոտական թեման, որի հենքի վրա 2016 թ. սեպտեմբերին կենտրոնում ձևավորվել է առանձնացված հետազոտական ծրագիր:

ՀՀ մարզերի տեխնոլոգիական զարգացումը բնորոշող համաթվի կառուցման հնարավորության գնահատման նպատակով ձևավորվել է «ՀՀ-ում «նոր տնտեսության» ձևավորման տարածքային ներուժի հետազոտումը» թեման:

Ֆինանսական հատվածում սեփական վիճակագրական շտեմարանների ձևավորման նպատակով ձևակերպվել է «ՀՀ ֆինանսական շուկաների վիճակը և զարգացումները» մագիստրոսական հետազոտական թեման, որի մասնակիցները ամենամսյա և եռամսյակային կտրվածքով պատրաստել են ամփոփ վիճակագրական տվյալների շտեմարաններ՝ 6 առանձին խորագրերով: Մագիստրոսական այս թեմայի շրջանակներում ներկայում համագործակցություն է ձևավորվել «Նասդաք ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ հետ:

Ընդհանուր առմամբ՝ 2016 թվականի ընթացքում «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական թեմաների մեջ ներգրավված են եղել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի 27 աշխատող և 10 ասպիրանտ ու մագիստրանտ:

Հաշվետու ժամանակահատվածում «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակիցները հրատարակել են 5 մենագրություն (համախումբ), հրատարակության են պատրաստել 26 գիտական հոդված (16-ը՝ միջազգային ամսագրերում):

3. Գիտաժողովներ, սեմինարներ

2016 թ. նոյեմբերի 15-18-ը անցկացվել է համալսարանի 26-րդ գիտաժողովը՝ «Գործարար միջավայրի բարելավման և միջազգային տնտեսական համագործակցության ընդլայնման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով:

Գիտաժողովի աշխատանքները կազմակերպվել են «Կառավարում, կրթության կառավարում և մարդկային ռեսուրսների տնտեսագիտություն», «Ֆինանսական շուկաներ և հաշվապահական հաշվառում», «Մակրոէկոնոմիկա և միջազգային տնտեսական հարաբերություններ», «Լեզվաբանություն, արտակարգ իրավիճակներ և քաղաքաշտպանություն» խորագրերով (համապատասխան բաժանմունքներում). ներկայացվել է շուրջ 100 զեկուցում:

Հրատարակության գործընթացում են գիտաժողովի նյութերը՝ մոտ 40 մամուլ ծավալով:

Համալսարանի գիտական գործունեության կարևոր բաղադրիչներից են գիտական բազմաթիվ սեմինարները, որոնք անդրադարձել են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող թեմաներին, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի և գիտաուսումնական խմբերի շրջանակներում կատարված հետազոտություններին:

4. ՀՊՏՀ աշխատակիցների հետազոտությունների արդյունքների հրապարակումները

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված հետազոտությունների արդյունքների հիման վրա հրատարակվել են 3 դասագիրք, 25 ուսումնական ձեռնարկ, 16 մենագրություն, 6 դասախոսությունների նյութեր, 400 գիտական հոդված, 29 մեթոդական ցուցում, 8 ուսումնամեթոդական աշխատանք: Հոդվածներից 106-ը լույս են տեսել արտասահմանյան պարբերականներում:

Գիտական ամսագրերում 2016 թվականին, 2015 թվականի համեմատությամբ, մոտ 20%-ով պակասել է համալսարանի գիտնական մանկավարժների, ասպիրանտների ու մագիստրանտների հրապարակումների թիվը: Միևնույն ժամանակ, շուրջ 1.8 անգամ ավելացել է հրապարակումների քանակը միջազգային ամսագրերում:

Դրանց շուրջ 45%-ը բաժին է ընկել 6 ամբիոնի (մակրոէկոնոմիկայի՝ 9.4%, միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման՝ 8.0%, կա-

ռավարման՝ 7.2%, տնտեսագիտության տեսության՝ 7.0%, տնտեսամաթեմատիկական մեթոդների՝ 7.0%, բանկային գործի և ապահովագրության՝ 6.7%):



Գծապատկեր 2.1. ***Հրատարակված գիտական հոդվածներն ըստ մեծ տեսակարար կշիռ ունեցող ամբիոնների***

5. Ուսանողների գիտահետազոտական գործունեություն

Ուսանողների գիտահետազոտական աշխատանքը գիտական և ուսումնադաստիարակչական գործընթացի հիմնական բաղկացուցիչներից է, որն իրականացվում է ֆակուլտետներում, ամբիոններում, գիտաուսումնական խմբերում, հետազոտական կենտրոնում անհատական և ավարտական աշխատանք գրելիս, արտադրական փորձառություն անցնելիս, ուսանողական գիտական ընկերության նստաշրջաններին և դրամաշնորհների շրջանակներում հետազոտություններին մասնակցելիս:

2016 թվականի մայիսին կազմակերպվել է համալսարանի ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) 37-րդ նստաշրջանի առաջին փուլը, որին մասնակցել է բակալավրիատի շուրջ 100 ուսանող (նախորդ տարի՝ 150): Նրանցից 65-ը անցել են երկրորդ՝ համալսարանական փուլ: Երկրորդ փուլին մասնակցելու է նաև 30 մագիստրանտ (նախորդ տարի՝ 26):

Համալսարանի ուսանողները մասնակցել են նաև այլ բուհերի կազմակերպած գիտաժողովների, կլոր սեղանների, բանավեճերի և մրցույթների: Մասնավորապես՝ ՀՊՏՀ ուսանողներն ու ասպիրանտները մասնակցել են Բյուրականում կայացած գիտական զբոսաշրջությանը նվիրված հավաքին ու Արցախի պետական համալսարանում անցկացված Ուսանողական գիտական ընկերության միջազգային նստաշրջանին:

Հաշվետու տարում շարունակվել են ուսանողներին և մագիստրանտներին գիտական աշխատանքների մեջ ներգրավելու ուղղությամբ կատարվող քայլերը: Այս նախաձեռնությունները հաջողված ու հեռանկար ունեցող օրինակներ են, հիմք այդ գործընթացի ակտիվացման, նոր ձևաչափերի մշակման ու կիրառման համար:

6. Գիտական գործունեության միջազգայնացում

Համալսարանի գիտական գործունեության միջազգայնացման առումով կարևորվել է հետևյալը.

- հետազոտություններ և դասավանդում արտասահմանյան համալսարաններում,
- միջազգային հրապարակումներ,
- մասնակցություն միջազգային գիտաժողովներին, գիտական նստաշրջաններին և միջազգային ամսագրերի խմբագրական խորհրդի նիստերին:

Համալսարանի աշխատակիցները 2016 թվականին Ֆրանսիայում, Իռլանդիայում, Գերմանիայում, Բելգիայում, Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում, Բուլղարիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Բելառուսում, Ուկրաինայում, Մոլդովայում, Վրաստանում մասնակցել են գիտաժողովների:

Միջազգային գիտաժողովների են մասնակցել նաև համալսարանի մագիստրանտներն ու ասպիրանտները:

7. Բարձրագույն կրթության երրորդ աստիճան (ասպիրանտուրա)

Բարձրագույն որակավորման կադրերի պատրաստումը պայմանավորված է երկրի պահանջմունքների շրջանակում գիտական հետազոտությունների գերակա ուղղությունների, բարձրագույն որակավորմամբ տնտեսագետ մասնագետների կադրային ապահովման խնդիրներով:

Համալսարանի հաջողությունները մեծապես պայմանավորված են երիտասարդ հետազոտողների գիտական ներուժի զարգացմամբ, ինչին կոչված է բարձրագույն կրթության երրորդ աստիճանը՝ ասպիրանտուրան և դոկտորանտուրան:

Միայն համալսարանի ասպիրանտուրայում պատրաստվում են 5 գիտական մասնագիտություններով բարձրագույն որակավորմամբ կադրեր:

2016 թ. դրությամբ համալսարանի ասպիրանտուրայում սովորում են առկա ուսուցման 33 (4-ը՝ արտերկրից), հեռակա ուսուցման 69 ասպիրանտ:

Հաշվետու տարում առկա ուսուցման համակարգում ասպիրանտուրա են ընդունվել 11, հեռակա ուսուցման համակարգում՝ 15 դիմորդ: 2016 թվականին առկա ուսուցման համակարգի 11 ասպիրանտ-շրջանավարտներից 10-ը պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն: Հեռակա անվճար ուսուցման համակարգում սովորող ասպիրանտներից 11-ն ավարտել են:

Հաշվետու տարում տարբեր ամբիոններում ձևակերպվել է 6 հայցորդ (վճարովի հիմունքներով). հացորդի պարտականություններից ազատվել են 17-ը:

2016 թվականին զգալի աշխատանք է կատարվել նաև ասպիրանտուրայի նախկին շրջանավարտների և հայցորդների շրջանում. 6 ասպիրանտ և հայցորդ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Ասպիրանտուրայի արդյունավետությունը, ըստ առկա ուսուցման համակարգի, կազմել է 91.0% (նախորդ տարվա 90.0%-ի դիմաց):

ՀՀ ԲՈՀ-ի՝ համալսարանում գործող տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում 2016 թվականին կազմակերպվել է 22 ատենախոսության հրապարակային պաշտպանություն (1-ը՝ դոկտորական):

Խնդիրներ

Թեպետ հաշվետու տարում գիտահետազոտական գործունեության բնագավառում արձանագրվել են նշանակալի ձեռքբերումներ, այնուամենայնիվ դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնցից են.

1. Ասպիրանտուրայի ընդունելության գործընթացում ՈՒԳԸ աշխատանքներին մասնակցության կարևորության ոչ բավարար մակարդակը:
2. Ասպիրանտուրայի և հատկապես դոկտորանտուրայի՝ երիտասարդ հետազոտողներով համալրման ոչ բարձր մակարդակը:
3. Ֆակուլտետներում և ամբիոններում ՈՒԳԸ աշխատանքների քննարկման և վերահսկողության ցածր մակարդակը:
4. Գիտաժողովներին, գիտական սեմինարներին և կլոր սեղաններին ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի որոշ անդամների ոչ գործուն մասնակցությունը:
5. Հետազոտությունների ֆինանսավորման աղբյուրների ոչ մեծ թիվը:

2016 թ. գիտական գործունեության զարգացմանը միտված նախաձեռնությունները պետք է նպաստեն առկա հիմնախնդիրների հաղթահարմանը: